

ՀԱՅ Ք

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, ՏՐ. Մ. Ս. Գաբրիելյան

Կ. Պոլիս 5 Յունվար 1893

Մկրտիչ Թիւթիւնճիէֆ, նախկին ազգային գործիչ ի Պուլկարիա և այժմ մատնիչ ի Կ. Պոլիս, երեկ երեկոյ, ժամը ըստ Թրքաց Ձին ատենները Իսկիլտարի փողոցներէն միոյն մէջ երկու անձանց անձանց կողմէ դանակի հարուած մը ընդունած է փորին: Թիւթիւնճիէֆի վէրքը գուցէ մահացու չէ, սակայն կը յուսամ թէ այս ազգարարութիւն մը կ'ըլլայ միւս հայ մասնչին զոր կ'ըսուի թէ Թիւթիւնճիէֆ Պուլկարիայէ մայրաքաղաքս կանչած է:

ԱՆՍԵՆՈՒՆ

ՀԱՅՔԻ ՅԱՋՈՂՈՒԲԻՒՆԸ

«Հայք» 1893 թուականն կամ երրորդ տարեշրջանն սկսաւ մեծ յաջողութեամբ: Գրեթէ ամեն տեղ իւր բաժանորդաց թիւ աճեցաւ, և ուրեք ուրեք շատ աճեցաւ: Օրինակի համար ի Պոսթըն և ի Ֆրէզնոյ բաժանորդաց թիւն անցեալ տարուան կրկնապատիկն է այս տարի, ի Փարիզ՝ քառապատիկն է: Ի Փրովիտէնս անցեալ տարի մէկ բաժանորդ ունէր «Հայք», այս տարի ունի 20: Դեռ հեռաւոր գաղթականութիւններէ հրամանք հասած չեն մեզ, բայց շատ յոյս ունիմք թէ ամեն տեղէ ալ խրախուսական լուրեր անյապաղ կը ժամանեն:

Այս աճումներն կը պարտինք հասկացող դասուն եռանդուն աջակցութեան, որոց կը կրկնենք մեր ջերմագոյն շնորհակալութիւններ հրապարակաւ:

Փրոֆ. Մինոս Չերազի գրական գործունէութեան 25րդ տարին կը լրանայ 1893 ին: Ըստ որում նա ծնած է 1852 Յուլիս 15ին (Նոր Տումար), պատշաճ է որ նորածննդեան 41րդ տարեդարձին առթիւ կատարուի գրական կիսայօրեալեան տօնը:

Արեւելագէտներու ժողովն յառաջիկայ ամառ կարծեսք տեղի պիտի ունենայ ի ժընէվ, ուր հաւանական է երթայ այն առթիւ և տիար Չեբազ իբրև ներկայացուցիչ Հայոց: Եթէ այնպէս է, շատ յարմար կը լինի տօնը կատարել ի ժընէվ ուր բազմաթիւ հայ ուսանողներ կան և կրնան կարեւոր փայլը տալ այս գրական տօնին:

Անշուշտ ժամանակ տուաջ այս ամեն պարագայք կը յայտնուին և պատշաճ կարգադրութիւնք կը կատարուին:

Ամերիկայի ուսեալ հայրենաստէրներն անտարակոյս պիտի կերպիւ իւրք մասնակցին այս տօնին:

*

* *

Վերջին Ղեւոնի մահուան հինգհարիւրերորդ տարեդարձը ևս կուգայ այս տարի, Նոյեմբեր 29ին: Պէտք է որ ամեն ուրեք հայ գաղթականութիւնք կատարեն Հայոց վերջին թագաւորին մահուան հինգերորդ դարեդարձն, որ շատ հազուադիւս առիթ մ'է հայրենասիրական եռանդարծարծելու:



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," ևն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Արարկերի Շարժումէն ի՞նչ օգուտ ազ-
գիւն.— Բառարան Ֆոնմսերէնէ Հայ-Աշխար-
հիկ Մեսրոպ Նուպարեանի Եւ Հայերէն ուր
բառեր.— Ուսումնարար գրեւ.— Ամերիկայի Հա-
յերն, Հայ Գաղթականք ի Ֆրէզնոյ.— Վոլսթը-
րի Հայոց Մէջ Յուզմունք.— Նամակ Խաբըր
դէ.— Նամակ Է. Պոլսէ.— Ազգային և Քաղա-
քական Լուրեր. Տեղական Լուրեր:

Կը խնդրեմք որ մընի օրաւորի կողմ
մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեան
նրա դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ
դիւրութիւն ընծայած կը լինի մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th փողոց

Պրօտուէյի մաս

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր:

ԱՐԱՐԿԵՐԻ ՇԱՐՇՈՒՄԷՆ

Ի՞նչ օգուտ Ազգին

Ա.

Եզնիկ եպիսկոպոս Ապահունի, Հայ ե-
կեղեցականներու քան զամենայն աներ-
կիւղն, և Շմաւոն, Տաճկաստանի մէջ յե-
ղափոխական գործիչներու քան զամենայն
հմուտն, իբր մէկ տարի միասին գտնուե-
ցան Արարկերի մէջ և միասին գործեցին:

Այդ ժամանակ յեղափոխական գոր-
ծունէութեան մեծ կեդրոնն եղաւ Արար-
կեր, և քաղաքին Հայ ժողովրդեան վե-
րայ կատարուեցաւ փորձ մի սրոյ նման
ուրիշ ունէ հասարակութեան վերայ շէր
կատարուած:

Արարկերի Հայ ժողովուրդն՝ ուրիշ բո-
լոր թրքահայոց պէս՝ դարաւոր ստրկու-
թեան ազդեցութեան ներքե տկարացած՝
այլասեռած էր, բայց երկու կամ երեք
տարուան մէջ կարծես նոր ցեղ մի դար-
ձաւ և սկսաւ Զէյթունի քաջաց մոնչիւն-
ներուն արձագանք տալ:—Մեծեց գիւրք
գայմագամն, Հարաչար յօջօտեց զփոլիս
Եուսուֆ, ահ ձգեց ի սիրտ խրոխտ դրա-
ցեացն, տաքնապեցուց զկեդրոնական կա-
ռավարութիւնն, զինեալ խմբեր հանեց
ոստիկանաց դէմ կուռելու, և որ քան
զամենայն տարօրինակն է, Հարիւրաւոր
Հայ կանանց բազմութիւն խուժեց կառա-
վարութեան ապարանքին վերայ և բողո-
քոյ ձայն բարձրացուց՝ պատրաստ նաեւ
զինեալ բազուկ բարձրացունելու...

Յիւրաի Զէյթուն շատ աւելի փորձ և
փորձանք կրած է, բայց ինքնաբեր՝ ոչ
թէ արտաքին աշխատութեան շնորհիւ:
Զէյթուն Հին գոռ նախարարաց ոգին կը-
րող ցեղ մ'է որ լեռան կողերուն կըռթ-
նած՝ երբեմն երբեմն ի լուր աշխարհի կը
մոնչէ իբր բողոքելու համար յանուն ան-
ցեալ ազգային իշխանութեան: Զէյթուն
Հնոյն անընդհատ, անմահ շարունակու-
թիւնն է, Արարկեր Հնոյն յարութիւնն է:

Եւ տարակոյս չկայ թէ ամեն հայա-
բնակ քաղաքի ժողովուրդը կրնայ կրել
նոյն նորոգութիւն, յառնել նոյն յարու-
թեամբ՝ եթէ միւսնոյն թխտումն կրէ զոր
կրեց Արարկեր:

Եւ եթէ միայն տաան այնպիսի քաղաքներ ոտքի ելնէին Տաճկաստանի մէջ, օսմանեան պետութիւնն ամիսներու կարօտ կը լինէր զայնս վար նստեցունելու համար, և այդ ժամանակ աւելի քան բաւական կը լինէր Մեծ Պետութեանց ազդու և փրկաւէտ միջամտութիւնն հարկաւորելու Հայաստանի համար:

Ի՞նչ զարմանք եթէ Բ. Դրան սիրար թունտ ելաւ Արաբկերի խլրամանց շշուկէն, բռնուեցաւ Շմաւոն, և տարագրեցաւ Եղնիկ, և յաքսոր ուղարկուեցան երեւելիք:

Բ

Բ. Դուռն դաս մի սովորեցաւ ուրեմն Արաբկերի շարժումէն. Մեք Հայքս ալ սովորեցանք դաս մի — թէ Հայերն, այր, կին, մեծ, պզտիկ, ընդունակ են յեղափոխական խանդով վառուելու և հին դարուց Հայերուն նման քաջագործելու:

Ի՞նչ է երկրորդ դասն. —

Թէ թրքական կառավարութիւնն խորամանկ աղուեսի պէս կառավարիչներ ալ ունի, ինչպէս և ոչխարազգեստ գայլեր, որոնցմէ Հայք պարսին զգուշանալ: Օրինակ լինի Արաբկերի գայմագամն Մուհամմէտ Ֆէհմի, որ իբրեւ ազատամիտ և հայասէր ինքզինք կլլել տուաւ Հայոց և նոցա փորձաբերն ու ներքին խորշերն զընենց ու քննեց:

Վանէն անցեալտարի «Հայք» ի ուղղեալ թղթակցութեան մի մէջ ևս նոր փաշայի նկատմամբ ըստածէն կարելի է գուշակել թէ նա ևս ի սկզբան անդ իւր պաշտօնավարութեան ուղած է հաճելի տպաւորութիւն գործել ժողովրդեան զարգացեալ դասուն վերայ՝ երեւելով արդարասէր և կարգապահ:

Արդարասէր մահմետական կառավարիչ մի հնարաւոր իրաց սահմանէն դուրս չէ, — այնպիսին տեսնուած է, թէ և յոյժ ցանցաւ — բայց ներելի չէ Հայոց մէկէն հաւատալ և մտերմանալ այնպիսեաց դասուն վերաբերիլ թուող պաշտօնէից: 1891ին խարբերդի վալին Բաղուպ Փաշա արդարասէր անկաշառելի ոք էր, և սակայն նոյն ինքն թուրք պաշտօնեայք թշնամի եղան նմա և քիչ ամիսներու մէջ յաջողեցան վայն պաշտօնանկ ընել տալ:

Գ

Երրորդ դաս.

Եռանդուն ազգասէր երեցող և համարուող ամեն մարդ ազգասէր չէ:

Արաբկերի Բաց Գլխենց Փիլիկ որ ծածած էր զգայմագամն և վասն որոյ բնատարկուած, վերջապէս եղաւ խաճիյէ և դեռ կը կատարէ մատնչի պաշտօն:

Փիլիկ ներկայացուցիչ մ'է Հայրենասէրներու այն տեսակին որ եռանդ, շատախօսութիւն, ձեռներիցութիւն ունին, և այնպիսի յանդգնութեամբ կը խիզախեն ի գործ՝ որ զարմանալի կը հանդիսանան յաջս ժողովրդեան իրրեւ տիպար ազգասէր: Մինչև իսկ ուսեալ և խելօք մարդիկ՝ առաջին տպաւորութենէն յափշտակուած՝ զայդպիսիս «անձնուէր հայրենասէր» կը հռչակեն:

Հալապ վարժապետ Կարապետ, Վանայ Աւետիս Պարթեւեան, Ռուսչուքի Թիւթիւնճիէֆ, դոքա և դոցին նմաններն Փիլիկի դասուն կը վերաբերին. ամենքն ալ եռանդուն, աներկիւղ ճանաչուած են երբեմն: Դոքա ոչ միայն ուրիշներուն, այլ և իրենք իրենց ազգասէր՝ կ'երեւին, զի Հայրենասիրութեան քօղն մտածուած կեղծաւորութեամբ իրենց վերայ առած չեն: Բնաւորութեամբ անհանգարտ և եռանդուն են, անկարգ և յախուռն գործունէութեան պէտք կը զգան այդպիսիք, և եթէ ժամանակին հոսանքն ազգասիրական է, իրենք ալ այն հոսանքին մէջ կը նետուին ինքնեկ՝ և առաջ կ'անցնին: Օր մ'ալ պատեհութիւնը կամ փորձ ձիջը իրենց կը մօտենայ և աւելի շահաւոր գործունէութեան ասպարէզ կ'ընծայէ — և կը դառնան խաճիյէ, մատնիչ կամ այդպիսի ինչ:

Յայնժամ ամեն ոք կը հասկնայ թէ Փիլիկ ազգասէր չէ եղած երբէք: Ազդասիրութիւնն կարծիք կամ համոզում չէ որ մարդ փոխէ, թողու. Հայրենասիրութիւնն հոգւոյն և սրտին և բնաւորութեան արտայայտութիւնն է. ո՛վ որ ճշմարիտ ազգասէր է, երբէք չկրնար ազգատեաց դառնալ:

Այս առերևոյթ ազգասէրներն ազգին մնաս կը հասցունեն մատնիչ դառնալէ առաջ ալ, վասն զի ընդհանրապէս խանդարիչ, կռուարար և յամառ կը լինին, բայց ալ աւելի մնաս կը գործեն երբ թշ-

նամուտն կողմ կ'անցնին, քանզի ամեն բանի իրազեկ են և գրեթէ ամեն գաղտնիքի ծանօթ, ընկերութեանց անդամ և յաճախ պաշտօնեայ:

Արդեօք հնա՞ր է այդպիսիներն ճանաչել յառաջ քան գոյնը գուրս տալն: Այս ճանաչողութիւն շատ բազմալի է մանաւանդ որ այդպիսեաց յոյժ փոքր մասին կը պատահի պարագայից և դիպմանց այն ընթացակցութիւն որ հարկաւոր է գոյնը գուրս տալու համար: Շատերուն մէջ մատնչութիւնն ցորութենական կամ բողմսիւ վիճակի մէջ կը մնայ ցմահ:

Շատ փնտսէ զերծ կը մնանք եթէ հընար լինի ճանաչել և ազգային գործերուն երեքին մասնակցութեանէ դուրս պահել այդպիսիներն:

Մեք ապահով փորձաքար մ'ունինք, անսխալ սկզբունք մի, որոյ շնորհիւ կարելի է սուտ ազգասէրն որոշել ճշմարիտ ազգասէրէն:

Խնդիրն երկար բացատրութեանց կարօտ է, բայց առ այժմ կարճ ի կարճոյ խօսինք:

Ի հարկէ նախ պէտք կը լինի ըսել թէ ի՞նչ է Հայրենասիրութիւն, մանաւանդ մեր դարու զարգացեալ ըմբռնման համեմատ:

Մեք շատ բարձր, շատ վսեմ բան, յոյժ վեհ առաքինութիւն կը ճանաչենք Հայրենասիրութիւնը: Հայրենասիրութիւնը կրնայ այսինչի մէջ տկար, սկզբնաւորող, անզարգացեալ վիճակի մէջ լինիլ, բայց միշտ ճշմարիտ է այն, և ազնիւ և սուրբ և արդար: Հայրենասիրութիւնը չկրնար երբեք հաշտ բնակիլ մարդուն հոգւոյն մէջ ստութեան, անիրաւութեան, նուաստութեան, ագահութեան կամ այլ ունէ բարոյական մեծ արատի հետ: Հայրենասիրութիւնն բարձր առաքինութիւն մ'է որ բազում ուրիշ առաքինութիւններու սեանց վերայ կրնայ կենալ, անձնուէր սիրոյ և խորին բարոյականի փառաւորագոյն արտայայտութիւնն կամ ազնուագոյն ձևն է:

Կրնայ լինիլ որ յոյժ առաքինի մարդ մի Հայրենասէր լինելու առիթ չունենայ իւր ազգի վիճակին և իւր անձնական ըզբաղմանց բերմամբ. բայց հնար չէ որ նուազ և մոլի մարդ մի Հայրենասէր լինի:

Ուստի երբ տեսնեմ մարդ մի որ

եռանդագին կը սիրէ իւր ազգ ի տեսականին, բայց ազգին անհատներն կը խտրէ, կը բամբասէ, կը զրպարտէ և մինչև անգամ կը հարստահարէ ի գործնականին՝ երբ առիթ ունենայ, կը վճռեմ թէ նա սուտ ազգասէր է:

«Չարն չկարէ սիրել իւր ազգ, ինչպէս քարն չկարէ թռչիլ» ըսած եմ երբեմն, նորէն կ'ըսեմ:

Պէտք է զծառն պտղէն ճանաչել. մանաւանդ բուսարան չեղողին համար աւելի ապահով է դատել զծառն պտղէն քան տերեւէն կամ կեղեւէն. նոյնպէս և այն որ խորին հոգեբան կամ մեծ հանճար չէ, լաւ կ'ընէ որ մարդուն պտղին նայի, պտղոյնը նայի և այնպէս դատէ:

Երբ տեսնես «ազգասէր» մի որ իւր գործքով կը ցուցնէ թէ բարեսէր, արդարասէր և ճշմարտասէր չէ, գիտցիր որ նա ազգասէր ալ չէ:

Զգոյշ լեր սակայն մէկէն վճիռ տալէ անորոշ զրոյցներու և անստոյգ վկայութեանց նայելով: Հայրենասէր մարդը շատ զգուշաւոր է կարծիքներ ու համոզումներ կազմելու մէջ նոյն ինքն տեսական հարցերու մասին, իսկ անձնաւորութեանց գալով՝ յոյժ խղճամիտ է և ծանր. նա դիւրաւ չփոփոխեր իւր համարում անձանց նկատմամբ և մանաւանդ մեծ անբարոյականութիւն կը համարի իւր աննպաստ տպաւորութիւններն ու թուիքն ուրիշներու յայտնել կամ հրատարակել, նա կարի երկիւղած է, չլինի թէ իւր վիճելի կարծիքն իբր ապացուցեալ համոզում առնուի ուրիշներէ և հետեւապէս մէկուն անուան և ազգային գործունէութեան փնտս հասնի:

Դ

Դարձնենք մեր աչք Փիլիկի դասակարգէն Դանիէլի դասակարգին:

Դանիէլ զոր թուրք կառավարութիւնը բանտարկած կը պահէ երկու տարիէ ի վեր, և որում կ'ընծայէ Փոլիս Եւսուֆի յօշոտումը, կը վերաբերի Արաբկերի Հայ Հասարակ Ժողովրդին, ինչպէս Փիլիկ ինքն, և չէ աւելի ուսեալ քան զնա, բայց հոգւոյ և սրտի ձրիւք բոլորովին կը տարբերի: Դանիէլ ունի արութիւն Փիլիկի Ժպրհութեան տեղ, և ո՞գիտէ ինչ անասելի տառապանք կը կրէ բանտին մէջ առանց ընկճելու, առանց հոգւով ակարա-

նալու, նկատելով ինքզինք իրրև յօժարակամ ողջակէզ հայրենեաց սեղանին վերայ դրուած:

Ո՛ր Դանիէլ, օրհնեալ լինիս դու: Մեք կը յիշենք զքեզ և կ'երեւակայենք քո չարչարանք. քո անուն Հայոց Պատմութեան մէջ պիտի արձանագրուի ինչպէս մեր սրտերու մէջ արձանագրուած է:

Այո՛, ընթերցող, անուս, աննշան դասու Հայերուն մէջ կան մեծ հոգիներ, ազնիւ սրտեր, որոց անուն հայ դիւցազունց անուանց քով կրնամ ես դնել համարձակ:

Աստուած տայ որ այդպիսիներ չառնան մեր ժողովրդեան մէջ:

Ե

Արարիկերի Շարժման համառօտ պատմութեան մէջ տեսնեք չորս գործիչներ, երկու՝ հասարակ կամ անսւս դասակարգէն, և երկու՝ սուսեալ կամ առաջնորդող դասէն:

Վերջին երկուքն են Շմաւոն վարժապետ և Եզնիկ վարդապետ, մին դեռահասից ուսուցիչ, միւսն՝ չափահասից: Երկաքանչիւրին ալ պաշտօն ունի իւր ուրոյն փոփոխութիւն:

Շմաւոն գերազանց վարժապետ մ'է, մանկավարժական նոր եղանակներու տեղեակ, լաւ գիտէ մաթիմաթիք և տարրաբանութիւն, և արդարեւ կը շինէ ուժանակ և ուսմբ: Մարմնով յաղթանդամ և ուժեղ է, բնաւորութեամբ վեհանձն, վարմանց մէջ զգուշաւոր, տալով իւր ոյժ մանաւանդ խմորելու քան գրգռելու, առանց յայտնապէս խօսելու ինչ՝ որով կասկածելի լինէր յաշս կառավարութեան թէ և օսմանեան հպատակ չէ:

Ահա գործիչ մի, որ շատ մօտ կուգայ մեր իսէականին:

Այժմ մեծ վարպետութիւնն գործիչի ի Տաճկաստան պիտի լինի շինել առանց աղմուկի, խմորել առանց քացղեցունելու, ճշմարտութիւնն ուսուցանել առանց բանտըն երթալու, ճշմարիտ լրագիր հրատարակել առանց դադարման, դատապարտուելու:

Ի՞նչպէս է Եզնիկ Ապահունի: Նա բառին ծայրագոյն նշանակութեամբ անվախ մարդ մ'է, կառավարութեան անտանելի հարստահարութեանց դէմ անհուն զայրացմամբ լեցուն՝ չէր կարող մերթ ընդ

մերթ հրացայտ խօսքեր դուռս չպոռթկալ նոյն իսկ եկեղեցւոյ բեմէն: Նորա քարոզներ ոչ լսկ ոգեւորիչ այլ և գրգռիչ էին երբեմն: Եւ իւր վարմանց մէջ ալ արի էր որպէս իւր բանից մէջ:

Եզնիկ եղակի անձնաւորութիւն մ'է հայ եկեղեցական բարձր դասուն մէջ. նա ունի իւր նմաններն, բայց ոչ ոք ունի իրեն հաւասարող:

Գովելի՞ է Եզնիկ թէ գտնուելի:

Արդեօք չէ՞ր պարտէր այնպէս վարուել որ կարենար մնալ յԱրաբիկ երկար տարիներ և կամաց կամաց ազատասիրութեան ոգւով ոգեւորէր բոլոր գաւառն, այնպէս որ շարժն ուշ տեղի ունենար բայց ա՛յլապէս մեծ արդիւնք յառաջ բերէր:

Չեմք ըսեր թէ Եզնիկ կատարեալ էր, բայց և ոչ կը մեղադրենք զնա: Ընդհակառակն, նա շատ գովելի յատկութիւններ ունի: Երբ կը մտածենք այն երկչոտ, իրենց շուքէն վախցող, թուրք կառավարութեան չափազանց համակերպող խոհեմ եկեղեցականներն ու պատրիարքներն, կ'ըսեմք թէ Եզնիկի չափազանց յանդգնութիւնն աւելի լաւ է և աւելի շինիչ:

Մեր ազգի ներկայ վիճակի մէջ շատ տեսակ գործիչներ իրենց մասնաւոր դերն ունին կատարել. Եզնիկի պէս յանդուգն ալ իւր դեր ու իւր պաշտօն ունի:

Ըսեմ՝ ձեզ թէ որոնք կործանիչ և վրնասակար են. — չափազանց խոհեմներն՝ մէկ. գործի բնաւ չխառնուող և յուսահատական խօսքեր քրթմնողներն՝ երկուք:

Չկրնար պահանջուիլ որ ամեն եկեղեցական Եզնիկ լինի, և ամեն վարժապետ՝ Շմաւոն, բայց կրնայ պահանջուիլ որ ամեն ով որ Հայ անուն կը կրէ, գործէ Հայութեան համար. եթէ կը կարծէ թէ ուսմամբ և դատախարակութեամբ միայն պիտի փրկուի Հայութիւնն, թող դրամ տայ առ այդ նպատակ և աշխատի առ այդ. եթէ համոզուած է թէ դատախարակութեան հետ պէտք է նաեւ արտաքին պարագայից կամ վարչական փոփոխութիւն, թող գործէ նաեւ ի նպաստ ատոր. թող գործէ՛:

Իսկ նա որ ի տեսականին կը սիրէ ազգը, այլ ի գործնականին կ'ատէ իւր ազգայիններ, — նա որ կը կարծէ թէ մարդ կրնայ հայրենիքը սիրել ու արդարութիւն

ներն ու ճշմարտութիւնն ոտնակոխ ընել—
այնպիսին ուսեալ լինի թէ անուս, բար-
ձր լինի դրիւք թէ ցած, չէ և չէ՝ հայրե-
նասէր, և նորա քոյր գործունէութիւնը վը-
նաս է ազգին—

«Մեզնից էնպէսն հեռանայ,
լոյս աշխարհից վերանայ .
Թո՛ղ անասնոց կարգն անցնի,
Թող մեր մէջ նա չմտնի:»

2

Արարիկերի Շարժումէն մեր ազգին օ-
գուտն է թանկագին փորձառութիւն:

Իմաստունք պիտի օգտին այդ գործ-
նական դասերէ:

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԲԱՌԱՐԱՆ ՖՈՒՆԿՍԻՆԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

ՄԵՍԲՈՎ ՆՈՒՊԵՐԵՍԵՆԻ

Ե Ի

ՀԱՅՆԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Մեսրոպ Նուպարեանի Փռանսերէնէ
Հայերէն բառարանը, տպեալ ի Կ. Պոլիս
1892 ին, 1092 երեսներէ բաղկացած, լա-
ւագոյն է քան իւր երեք նախորդներն, և
իւր առաւելութեանց մին այն է զի Փը-
ռանսերէնին դէմ ունի արդի կամ աշ-
խարհաբար Հայերէնը:

Ներկայ յօդուածի նպատակն չէ այս
գործոյ վերայ կատարեալ քննադատական
մի տալ, այլ միայն նոր բառերու նկատ-
մամբ յառաջ բերել ինչ ինչ խորհրդա-
ծութիւն համառօտ:

Երբ բառգիրքն ստացայ, և կարդա-
ցի յառաջարանին մէջ թէ «Այս բառգիր-
քի գիտական մթերքը շատ աւելի ճիշտ է,
հետեւեալ այս կարգէ նորակազմ բառե-
րու թիւը շատ աւելի ստուար,» բռն
հետաքրքրութեամբ փնտռել սկսայ նոր
բառերն, մանաւանդ գիտական և իմաս-
տասիրական կարգ մի բառեր: Պատահե-
ցայ շատ նոր բառերու ալ առանց յատ-
կապէս փնտռելու:

Նոր բառերու թիւն բաւական ստուար
է Նուպարեան բառարանին մէջ: «Խաչա-

նիշներն, կ'ըսէ հեղինակն, որք թուով 5,
000—6000 ի կը հասնին, մեզմէ կազմուած
բառերն կը ցուցնեն, որոց մէջ հին բառեր
ևս կան մերձաւոր կամ նոր առմամբ գոր-
ծածուած: Նոյնպէս խաչանիշ են մեր հե-
տադասութեամբ ժողովուած բառեր, (թէ և
ասոնք քիչ են համեմատաբար), ինչպէս
նաև մերձանիշ գաւառական բառեր՝ մեզ-
մէ յատկացուած իբր համապատասխանող
Փռանսերէն այս ինչ բառի:»

Օտեան էֆէնտի առ հեղինակն ուղ-
ղած նամակի մէջ քաջալերած է զՆուպա-
րեան՝ «Գիտել տալով որ մեր կազմած
կամ յարմարցուցած բառերու եթէ կէսը՝
քառորդն անգամ ընդունուէր՝ արդէն ոչ
փոքր ծառայութիւն ըրած պիտի լինէինք
Հայ գրականութեան:»

Եւ ես կ'ընեմ թէ ծառայութիւնն ոչ
փոքր կը լինէր եթէ այդ նոր բառերու
քոսնէն մէկը, այսինքն 300ը գոնէ ընդ
կարեւոր թերիներ, և ընդ ըստ արժա-
նւոյն:

Ի Հարկէ կատարելապէս ճիշդ և ար-
դար լինել կարենալու համար պարտ էր
ինձ նոր բառերու ամենն աչքէ անցու-
ցած լինել, ինչ որ չէի կրնար ընել: Կար-
ծեմ, սակայն և այնպէս, թէ կարող եմ ը-
ռել Նուպարեան բառերու փոքր մէկ մա-
սին համար թէ շատ լաւ յաջողած են, մէկ
մասին համար թէ լաւ յաջողած չեն, և
մէկ մասին համար ալ թէ սխալ են:

Ա. ՅԱՋՈՂԱՊԷՍ ՇԻՆՈՒԱԾ ՆՈՐ ԲԱ-
ՌԵՐ: Այս կարգէն օրինակի համար յի-
շենք ուժաբանութիւն (dynamique), խորշա-
միջային (intercellulaire), ստամոքացաւ (gas-
tralgie), վատոյժ (debile), գոր թէպէտ
գաւառական Հայերէնէ ընտրած է,
կ'արժէ յիշել, քանզի Փռանսերէնին ճշ-
գրիտ համազօրն է. զամազանակ (variété),
թէ և զայս բառ Ալիշան յառաջագոյն շի-
նած և գործածած է:

Բ. ԱՆՅԱՋՈՂԱՊԷՍ ՇԻՆՈՒԱԾ ՆՈՐ
ԲԱՌԵՐ: Բնասպիւր (albumine). ներգեւում
(atrophie). կլլում (déglutition). զարգաշը-
շում (evolution). վնասած (lesion). բնաշն-
չերակ (aorte). սրադատութիւն, քաջընտ-
րութիւն (tact). վարչական հիմնիվեր (coup
d'Etat). կենսիկ (microbe). մանրակենսիկ
(microzoaire). իրարանցել (alarmer). իրա-
րարկու (alarmiste) ևն. ևն:

Այդ նոր բառեր անյաջող կը համա-

րիմ վառն զի ոմանք աւելորդ են, արդէն հայերէնի մէջ կան աւելի լաւ և ճիշդ բառեր՝ ֆռանսերէններու՝ համապատասխան. «իրարանցել»-ին համար ունինք «թուեղ հանել» կամ «դող հանել», վարչական հիմնիվեր»-ին տեղ՝ «պետական հարուած»։ Ոմանց ալ թէ և չկան հայերէն, բայց Նուպարեանի բառերն չունին հարկաւոր ճշգրտութիւնն, երանգն և բուն հայեցի հանգամանքն լիովին. «փափկահրպու թիւն» փոխանակ «որադատութեան», «մանրէ» փոխանակ «կենսիկ»-ի, «վիրօն» փոխանակ «ֆնտած»-ի, «չնչեակաբուն» փոխանակ բնաչնչեակի կ'առաջարկեմ ես գործածել։ Պատճառներս բոլոր ցուցնել աստ չեմ կրնար, յօդուածս չափազանց չերկարելու համար։

«Բնասպիտ»-ի տեղ «սպիտին գործածել կ'առաջարկեմ, և այդ դասու բոլոր «ine» վերջաւորող գիտական բառերն հայերէն «ին» մասնկով կերտել ոչ թէ «իտ» ով։ «իտ» մասնիկը Հայր Գալուստի և Հայր Գաֆթան յառաջագոյն քան զՆուպարեան գործածեր են և սակայն այդու յաջողութիւնը չբարոքիր։ Հայերէնի մէջ, մեր նախնեաց նախնիք գործածած են «կին» կամ «ծին» բառն իբրև մասնիկ, որ հասարակ է հնտերոպեան լեզուաց մեծ ընտանիքին։ Դարաւոր գործածութեամբ այդ «կին» (կեանք, ծին, ծնունդ) բառն չըփմամբ և մաշելով եղանակաւորութիւններ կրեր և մասնիկի համեմատութիւն առեր է, այնպէս որ այժմ ունինք հայերէնի մէջ «կին» բառէն ծագած հինգ հոմանիշ մասնիկներ— «կան» «եան» «յին» «ին» և «դի» ամենն ալ ծագում, ինչ բանէ ելլելն, ծնիլը կը ցուցնեն այն բանին որուն կը կցուին։ «Մարդկային»ը մարդկածին է, և եթէ «պանրին» ըսենք «պանրածին» ըսած կը լինինք։ ուրեմն աւելորդ է caseineի դէմ «պանրածին» դնել, և fibrineի դէմ նեարդիտ, ինչպէս ըրած է Հ. Քալուստի. պէտք է որ այդ դասու բոլոր բառերն միօրինակ վերջաւորին, և մի և նոյն մասնիկաւ, «ին»ով, որ ճշդիւ կը պատասխանէ եւրոպեան «ine» մասնիկան ձայնին ու իմաստին միանգամայն։

Կ'արժէ որ յատկապէս յիշենք Evolution բառն, որ մեր ժամանակաց քան պատկան մեծ գիտական և միանգամայն ի-

մաստասիրական դադափարին բացատրիչն է։ Ոմանք այդ բառին համար շինած էին «բարեշրջում» բառն, Մ. Նուպարեան ալ շինած է «զարգաշրջում» բառն հաւասար անյաջողութեամբ։ Ուրիշ մ'ալ շինած է շրջափոխութիւն զոր Նուպարեան չէ ընդուներ։ Եւ սակայն ով էր շինելու է այս վերջինը, աւելի լաւ յաջողեր է։ Եւրոպեան բառն ալ արդարեւ «յառաջդիմութիւն» և «զարգացում» բառերուն միտքը կուտայ, բայց անոնցմէ տարբեր է, չատ աւելի բարդ և կատարեալ գաղափար մի կը բացատրէ, քանզի ոչ թէ միայն անհատին, այլ և մարդկութեան, բուսականին ու կենդանականին, աշխարհին ու տիեզերին մէջ մշտնջենաւորապէս կատարուող փոփոխութեանց մեծ օրէնքը կը նշանակէ։ Իրաւ այդ փոփոխութիւնը զարգացողական են վերջապէս, և նոյն ինքն այդ իմաստասիրական դրութեան մեծ վարպետն եղող Հէրպէրդ Սթենսըր կը գործածէ այդ բառ՝ փոփոխութեանց յառաջդիմական շրջանն նշանակելու, և dissolution (լուծում, քայքայում) բառն կը գործածէ իբրև հակադիր առաջինին (1)։ Սակայն իմաստասիրաց ընդհանուր միտումն է «էփուլիսիոն» բառին մէջ պարունակուած նկատել օրէնքին ամբողջը, — իրին զգալի վիճակի գալն մինչև առ երեւոյթս չիբլինին կամ անզգալի դառնալն՝ կատարուած թէ՛ յառաջտեղէմ և թէ՛ յետադէմ բոլոր փոփոխութեանց շարքն։ Ֆռանսացի իմաստասէրն Ռիպոյ չատ լաւ կը բացատրէ զայս էական կետ(2)։ Շինենք ուրեմն այնքիսի հայերէն բառ մի որով զարգացման և վատթարացման բոլոր ընթացքն նշանակել կարենանք, ուստի և դուրս ձգենք «բարի» և «զարգ» արմատներն (զարգ ալ «յարգ» արմատին լծորդ է և լաւագունի միտք կուտայ)։ Կրնանք յայնժամ պատշաճօրէն թարգմանել ֆռանսերէն սապիսի խօսքեր— Par une evolution retrograde, յետադէմ շրջափոխութեամբ մի— որ այլանդակ կը լինէր եթէ թարգմանէինք— «յետադէմ բարեշրջմամբ կամ զարգաշրջմամբ մի» քանզի ածականն պիտի հակասէր գոյականին։ Եւ կատէ նաև սա խօս-

(1) Տես Herbert Spencerի First Principles գործին ԺԲ և ԴԳ գլուխներն։

(2) Տես Th. Ribotի L'Heredité Psychologique գրոց 363—365 երեսներն, (Դ. Տպ.)։

քը— Quand on est entré dans la période descendante de l'évolution, l'hérédité affermit et régularise la decadence.

Ուրեմն կ'առաջարկենք որ Շրջափոթիւն բառն ընդունուի իբրեւ յարմարագոյն, որ յիրաւի լաւագոյն է քան զԵւրոպականն իսկ:

Անյաջող բառերու կարգին մէջ յիշենք— թէ և կրնայինք սխալներու կարգին ալ վերապահել— այն բառեր զորս նուպարեան յերիւրած է Փռանսերէն բառերու հայ ածանց կցելով. այսպէս, օրինակի համար, tuberculose էն հաներ է «թուպեռականութիւն», hystérie էն «հիսթերութիւն», tetanos էն «դետանիկ», critique էն «կրիտիսող», ևն. ևն.

Գ. ՍԽԱԼ ՇԻՆՈՒԱԾ ԲԱՌԵՐ.— Այս բառեր ընդհանրապէս գիտական եզրներ են, զորս լաւ է հասկցած հեղինակը և այնպիսի հայերէններ յօրիներէ որք տարբեր կամ սխալ միտք կուտան:

Contraction, իբրեւ բնախօսական բառ «կարկամում» պէտք է թարգմանուի ըստ նուպարեանի: Սխալն կրկին է: Փռանսերէն բառն չարժուժի գաղափար կը պարունակէ, հայերէնը՝ անշարժութեան. Փռանսերէնը առողջ գործողութիւն մի կը ցուցնէ, հայերէնը՝ անշարժութիւն մի: «կարկամիլ» բառն լծորդն է «կարել» և «կարկել» բառերուն, և կը ցուցնէ անդամի մի իբր թէ կարուած լինելով ակամայ անշարժութեան մէջ մնալն: Գաւառացին կարիճի դէմ երեկոյին մազթանք մի կ'ըսէ յորում սա խօսքը կայ. «կապիս ու կարկամիս մինչև արեցաթ»: Բռնթրաքսիոնի վաղածանօթ հայերէնն է «կծկում»:

Rachitisme հիւանդութիւն մ'է զոր «ոսկրաթեքութիւն» բառով կը թարգմանէ մեր հեղինակը, անգիտանալով թէ «թեքել»ը բան մի օգտակար ընելու, բռնական բիրտ վրձակէն ճկելու և գործիքի կարգ անյունելու համար ծռել է, գրեթէ կրթել է: Ախտաւոր, աննպաստ միտք տալու համար ունինք «թիւր» «ծուռ» և մանաւանդ «դար» բառերն. ուստի և պէտք է ըսել «ծուռութիւն» (կայ ծռամատ բառ մի գաւառական) կամ «ոսկրադարութիւն»:

Convulsion բառին դէմ ստեղծեր է «դնդերաւարութիւն» որ դժբաղդաբար բուն գաղափարին հետեւէն գոնէ չակնարկեր:

Chlorose արեան յատուկ ախտ մ'է,

որոյ հայերէն կարգած է «ամոյն» բառն, որ ոչ արեան հետ գործ ունի և ոչ ալ յիշեալ ախտին արտաքին նշան եղող կանաչաթոյր դալուկին կը յարմարի. ամոյն նա է որ մոյն կամ վայելչատեւ է: Միթէ ներքի¹⁰ է հայերէն բառ մի ըստ քմացնոր նշանակութեամբ գործածել:

Positivisme դէմ դրած է «դրադիտութիւն»: Բառն կրկնապէս սխալ է: Նախ որ բողբոջվիումը գիտութիւն է, այլ իմաստասիրութիւն. և «դրքի գիտութիւն» բնաւ չէ: Այդ իմաստասիրութեան վերաբերեալ բոլոր բառերու հիմպէտք է առնուլ «դրական» բառն, որ անկրճաանելի արմատն է: Եթէ «դրականեանութիւն» ըսել խորթ կը հնչէ կամ շատ երկայն կը թուի, ըսենք դրական իմաստասիրութիւն, երկու բառով:

Նուպարեան չափազանց միտում կը ցուցնէ մէկ կտորէն բառեր շինելու, և երկու անգամէ բաղկացեալ հայերէն պատուական ասացումներուն ու յատկութեանց տեղն ալ միակտուր բարդեր դնելու, ինչ որ հայերէնի շնորհն ու ոգին անգիտանալ է: «Դող հանել» կամ «թունտ հանել» յանհունա աւելի վայելուչ և ճիշդ հայ համապատասխանն է alarmերին, որու դէմ «իրարանցել» բառ մի դրած է հեղինակն: Նոյն միտումն է որ զինքը մզած է «դրադիտութիւն» բառն ստեղծելու, և «պաշտօնանկել» ևն ևն ըսելու:

Հեղինակին ամենէն ահագին սխալն դեռ չնշանակեցինք: Իւր նոր բառեր իրարու անձանօթ, իրարմէ անկախ են. կարծես թէ երբ բառ մի շիներ է, բոլորովին մոռցած է արդէն թէ անոր ընկերն, մէկ անդամն արդէն շինուած էր և այլապէս չինուած: Գիտական բառի մի արմատէն՝ անոր վերաբերեալ բոլոր բառերն կերտելու փոխանակ՝ տարբեր արմատներ գործածեր է, այնպէս որ բառերն դրութեան մի չեն վերաբերիր, և մարդ չկարծեր թէ մտքերն դրութեան մի վերաբերին: Օրինակի համար, սնունդ նշանակող trophie արմատէն բժշկական կարգ մի բառեր շինուած են, hypertrophie, atrophie, dystrophie. Հեղինակը չզգալով թէ այդ բառեր իրարու հետ ինչ գիտական յարաբերութիւն ունին, առաջինին դէմ՝ ուրիշէն առնելով՝ դրած է «աննդազանցութիւն» բառն, որ շատ գէշ է, իսկ երկրորդին դէմ՝ «ներգեւում» իւր կողմէն յատկացուած:

Ուր մնաց “անուղի” բառն: “Մենդազան-ցութիւն” բառին հետ գիտական խնամու-թիւն չկրցաւ հաստատուիլ, ինչ որ ան-հրաժեշտ էր, քանզի առանց ատոր՝ բա-ռին բոլոր կարեւորութիւնն կը կորնչի: Նոյնպէս dynamiqueին ըսած է “ուժարա-նութիւն”, չա՛տ լաւ, բայց երբ adynamie բառին կը նայիս, դէմը կը գտնես “կթո-տութիւն”. ուր մնաց “ոյժ”ը: Մեզի գի-տական բառ մի պէտք էր, նոր բառ մի, որ իւր յատուկ տեղն պիտի ունենար “ու-ժարանութեան” մէջ: Dynamie բառին “ուժանակ” ըսուած է հայերէն, ով որ ըսած է, լաւ ըսած է: Պէտք չէ մոռ-նալ թէ dynamie արմատով շինուած ինչ եւրոպեան բառի դէմ որ հայերէն կերտենք, պէտք է “ոյժ” բառն ան-պատճառ արմատ բռնենք:

Ուրիշ օրինակ: Հայերէն յօրինուած են “մանրագէտ” (միքրոսքոփ), “մանրա-գրութիւն (միքրոկրաֆի) ևն: Բայց երբ microbe բառին հայերէնը կերտելու եկած է կարգը, նուպարեան “կենսիկ” բառն կարկատած է, և այսպէս վերի բառերն կարծես բոլորովին մոռացուած տուած է: Պէտք էր ըսել “մանրէ”, յօքնակի՝ մանրէք, մանրէից կամ մանրէներու: “Մանրէ”ն ալ ապրող էակ է զոր “ման-ր”ադէտով միայն կրնանք տեսնել:

Հնար չէ այս անձուկ էջերու մէջ սպառել կարեւոր գիտողութիւններն, և ոչ ալ միւրի նոր բառեր շինելու վերաբե-րութեամբ ինչ ինչ սկզբունքներ բացատ-րելու: Յօդուածս վերջացունելու համար սաչափ ըսեմ թէ Փռաններէն լեզուին (կամ անոր պէս ուրիշ եւրոպական զար-գացեալ լեզուի) դէմ հայերէն լեզուն հա-նելու համար ա՛յնպէս որպէս բաղձացած է նուպարեան՝ կերտելով գիտական, իմաստա սիրական և այլ նորանոր հազարաւոր բա-ռեր, մարդ պարտի ոչ միայն Փռաններէն քաջ գիտնալ և հայերէնի մասին հասուն հեղինակութիւն լինիլ, այլ և խորապէս ուսումնասիրած լինիլ գիտութիւններ և իմաստասիրութիւններ. — գրադէտ, գի-տուն և իմաստասէր միանգամայն լինիլ մահկանացուաց քիչ անգամ կը տրուի: Ամբողջ եւրոպայի մէջ, յԱնգլիա, ի Գեր-մանիա և ի Ֆռանսա կրնան մատի վերայ համրուիլ այդպիսիք:

Եւ չեմ մեղադրեր զնուպարեան թէ ինչու այդպիսի վիթխարի ուսումնական

մի չէ ինքն, — և Հայ Ազգին մէջ չիք ոք այդպիսի. — այլ կը մեղադրեմ, և կը պա-սաւեմ զինքը որ յաւակնած է փորձել ինչ որ բացարձակապէս գեր ի վեր է քան իւր ոյժերն: Զայդ ընել ներքի և կարե-լի է միայն այնպիսի Հայ կաճառի կամ Ա-քատէմիայի մի ուր համախմբուած լինին Ազգին առաջնակարգ գրադէտք, գիտունք և իմաստասէրք:

Հակառակ իւր համեստ խոստովանու-թեան ի յառաջարանի բառարանին, նու-պարեանի նոր բառեր ոչ այնքան լաւա-գոյններն չինելու որքան հայերէն լեզուն խանդարելու կրնան ծառայել: Շատեր գուցէ գործածեն իւր այն նոր բառեր որք կամ անյաջող են կա՛մ սխալ: Յաջող հա-մարուելու նոր բառերն թուով փոքր են և ընդհանրապէս ա՛յնպիսի զորս կարելի է շինել առանց գերազանց հմտութեան:

Եթէ Մեծ. Տիար Մեսրով նուպարեան կը բաղձայ իւր բառարանով ծառայել Հայ գրականութեան, թող իւր Բառարանի երկրորդ սպառքութիւնը պատրաստէ ա՛յ-լապէս: Բառ չինելէ հրաժարելով՝ բառա-րան չինէ: Յայնժամ իւր Փռաններէն — Հայ Աշխարհիկ բառարան արդարեւ կը մաքրուի իւր սոսկալի արատաւորութենէ և կը դառնայ յոյժ պատուական գործ, ունենալով բազում գնահատելի առաւե-լութիւններ հնարուն վերայ:

ՈՏԵՆԱՒՈՐ ԳՐԵԼ

Խմբագրութեանս բաւական յաճախ կը յղուին ոտանաւորներ զորս գրեթէ նոյնքան յաճախ կը մերժենք հրատարա-կել: Յօդուած գրել դժուար է, ոտանա-ւոր գրել աւելի դժուար է: Որպէս զի ոտանաւոր մի ոչ թէ լոկ ոտքեր ունեցող գրուած այլ բանաստեղծութիւն լինի, պէտք է ունենայ ճշմարիտ խորհուրդ և գեղեցիկ ձեւ միանգամայն: Բանաստեղ-ծն ներշնչեալ մ’է: Նա կը խօսի իբրեւ վեհ խորհուրդներէ արեւեցեալ ոմն որ դէպ յիտէականի բարձրութիւններն կը ճախ-րէ:

Այս սկզբան համեմատ՝ ինչ որ դիւ-ցազնական, փափուկ, սիրային և իտէա-կան է, յարմար նիւթ է քերթողութեան,

խակ ինչ որ պարզ գիտական, նիւթապաշտական, չոր դրական է, արձակ և լուրջ գրութիւն կը պահանջէ:

Անիշխանականին ուժանակի քայքայիչ ձայնն բանաստեղծական բնութիւն չունի, այլ արձակ գրութեան կոչող նիւթ մ'է: Նոյնպէս երբ ընկերակրական ուղէ անպատճառ հաւատարմութիւն քարոզել հրգորին, ճոխին և հարուստին, պարտի քարոզել լուրջ, գիտական խստութեամբ և արձակ լեզուաւ:

Ոտանաւոր մի զոր կը մերժենք հրատարակել, ունի այդ մեծ թերութիւն: Ձեռով ոտանաւոր է, բայց ոգւով բանաստեղծութիւն չէ: Ահա մի քանի տողեր,

Դու հարուստ ես և միշտ զուգուած կեանք
ես վարում երջանիկ,
Իսկ ես աղքատ և միշտ քացղաց, ամառ չու
միմ հագնելիք.
Բայց երկուքիս կրծքի մէջ էլ անկեղծ սիրտ
է քարախում,
Ուրեմն մենք եղբայրներ ենք, էլ ո՛ւր ես իմ
ամարգում:

Այդպիսի տողեր բանաստեղծութեան երեւոյթն միայն ունին: Ոչ ոք կը զմայլի և կը հրապուրուի լսելով աղքատին խրատըն առ հարուստն և շինականին յորդորն առ իշխանն թէ հաւասար են իրարու, թէ մահկանացու եղբայրներ են ևն:

Այդպիսի խօսքեր աւելի կը ցուցնեն ցածր կեցողին դժգոհ հպարտութիւնը, որ նոյնքան անձնասիրութիւն է որքան հպարտ իշխանին հպարտութիւնը:

Եթէ մեր թղթակից կը բողբոջ ճշմարիտ բանաստեղծութիւն գրել, թող ոտանաւորն դնէ հարուստին և հգորին ի բերան: Երբ մեծատունն է որ եղբայրական սիրով խանդավառած կ'ըսէ անանկին, կամ երբ հզօրն է որ ի սրտէ կ'ըսէ սկաւրին — եղբայր եմք մեք. հաւասար եմք միմք. այդ կը լինի վեհ ու ազնիւ խորհուրդ, ճշմարիտ խոնարհութիւն որուն վերայ ամեն մարդ կը զմայլի: Եւ այդ գեղեցիկ խորհուրդ գեղեցիկ ձեռով ոտանաւորի եթէ վերածուի, կը լինի բանաստեղծութիւն, թէ և կատարելապէս ճշմարիտ լինելու համար պէտք է որ իրօք հզօր իշխանն կամ ամենակարող միլիոնատէրն իրօք զգայ այդպիսի զգացում և ի գիր առնու զայն:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՔ Ի ՖՐԷՉԵՆՍ

Ֆրէզնոյի մէջ Հայերն զբաղման տեսակետով, երեք դասակարգի կը բաժնուին — հողատէրք, արհեստաւորք և բանւորք կամ մշակք:

Ճշգրտեմք նորագոյն տեղեկութեանց նայելով՝ Ֆրէզնոյի հողատէր Հայերն այնքան գոհ և բարօրիկ չեն որքան ցայժմ կարծած էինք: Կան ապաքէն մի քանիներ որք 10—20 և մինչև 30 հազար թաւէնի արժողութեամբ հող ունին, բայց աւելի շատուոր են անոնք որք հող գնելով պարտքի ներքեւ ինկած կը հեծեն: Ոմանք կը փափաքին վաճառել իրենց հող և պարտքէն ազատելով մեկնիլ դէպ Արեւելեան Նահանգներ: Այլ ևս հող գնելու շատ փափաք զգացող Հայեր չկան հոն, կ'ըսուի:

Այս հողատէրք ոչ ցորեն այլ այգի կը մշակեն, և խաղողն կը վաճառեն: Ցորենի մշակութիւնն Ամերիկացւոց ձեռքն է, զի աւելի խոշոր դրամագլխոյ կարօտ է: Մեր հայրենակիցներ 20—30 էլքը հող կ'ունենան առ առաւելն, մինչ սերմնացանութեան համար առ նուազն 300 էլքը հարկաւոր է ունենալ, որպէս զի 30 ձիով քաշուող ահագին երկրագործական մեքենայն շարժելու և գործելու ասպարէզ ունենայ: և դրամ պէտք է այդ շնչաւոր ու անշունչ գործիներն հայթայթելու համար:

Արհեստաւոր Հայերն քան զամենայն գոհ և ազատ դասն կը կազմեն, և են դերձակք, ժամագործք, կօշկակարք, սափ լիչք և այլն: Սոքա լաւ դրամ կը շահին առանց չափազանց հոգ կրելու:

Իրօք չուառ բանւորութիւն ընելու ստիպուած Հայերն են, որք Տաճկաստանի մշակ Գրգերուն պէս անկողին չալկած պիտի թափառին և ուր գործ գտնեն, անդ պիտի գիշերեն ալ, և երբ մի քանի օր կամ շաբաթ յետոյ այն գործ աւարտի, պիտի չուեն երթան այլուր գործ խնդրել. և ի՞նչ գործ, տաժանելի, յոգնեցուցիչ, մանաւանդ տօթագին օդի մէջ, և միայն օրական վարձք մէկ ու կէս թաւէն առնելու համար: Այդեկութիւն եղանակին, երբ բանւորին յարգի ատենն է, ա-

ուրջէքն կը բարձրանայ մինչև մէկ թաւ
լէռ 75 սէնթի:

Ֆրէզնոյի Հայ Գաղթականութեան
մէջ ընտանիք բազմաթիւ են — թերեւս
ոչ նուազ քան 50 ամուսնացեալներ կան:
Հայ կնոջ տոկոսն և տնտես աշխատասի-
րութիւնն հոն ալ իւր հրաշքներ գործած
է. ոչ սակաւ մարդիկ իրենց կանանց կը
պարտին ամենայն յաջողութիւն բաւոյ-
նալով և հող:

Հայ մանուկներ հայերէն հազիւ կը
խօսին, նոցա ընտանի լեզուն անգլիերէնն
է: Այս ընթացքով յաջորդ Հայ սերունդն
բոլորովին անգլիախօս պիտի լինի: Հազ-
ուադէպ երեւոյթ չէ ձմերուկով կամ այլ
պտղով բեռնաւորեալ կառք մի տեսնել
ձիաքարշ, որոյ վերայ Հայ հայրն իւր մէկ
կամ երկու տղոց հետ նստած՝ փողոցնե-
րու պտոյտն կ'ընէ, տղայի անգլիական
շեշտով աղաղակելով «5 սէնթ մէկ ձմե-
րուկ:»

Հայ օրիորդք ի հարկէ երկրին հան-
րային վարժարանաց մէջ հասարակ ու-
սում առած են և ամերիկեան բարուց փո-
քր ի շատէ ընտելացած: Այդ օրիորդաց
համար վտանգ մի կայ. — ամերիկացի ե-
րիտասարդներ կրնան աւելի հաճելի թու-
իլ իրենց, բայց լաւ կ'ընեն եթէ իրենց
համազգի երիտասարդաց հետ ամուսնա-
նան, վասն զի այդպէսով իրենք աւելի
գոհ կը լինին իբրեւ հայախօս Հայ տնտե-
կին, որ իւր մասնաւոր փառքն ու հրա-
պոյրն ունի, բոլորովին տարբեր ամերի-
կեանէն

ՎՈՒՍԹՐԻՒ ՀԱՅՈՑ ՄԻՋ

ՅՈՒԶՄՈՒՆՔ

Վուսթըր 17 Յունիւ 1892

Յունիւար 15ին, կիրակի օրը, իբր 4
հարիւր Հայեր ժողով մ'ըրին հոս՝ տեղւոյս
Հայ Գաղթականութեան վերաբերեալ խն-
դիրներ քննելու համար: Քաղաքիս հնօրե-
այ Հայերէն մէկը, որ ազգային գործե-
րու խառնուող և Պոլսոյ Հայ լրագրաց
թղթակից եղած էր, վերջերս զրպարտու-
թիւններով և սուտերով շաղուած տեղե-
կութիւններ հաղորդեր է Ուոշինկթընի

օսմանեան ներկայացուցին, որ յատկա-
պէս Վուսթըր եկած և յիշեալ անձի հետ
տեսնուած է:

Ժողովոյն ատենապետեց Տիար Ա. Գրի-
գորեան, Պոսթընէն, և գլխաւոր խօսողն
էր Տիար Պօղիկեան, նոյնպէս Պօսթըն-
ցի: Սա մանրամասն պատմեց, հաւաստի
աղբիւրներէ առած, թէ զրպարտիչն
Վուսթըրի Հայոց մասին հետեւեալ սու-
տերն հաղորդած է օսմանեան ղեսպա-
նին. —

Թէ սոքա յեղափոխական շարժման
մը մասնակից են ընդդէմ օսմանեան պե-
թեան, և առ այդ նպատակ

Նախ—զինուորական կրթութիւն կառ-
նուն:

Երկրորդ—իբրեւ յեղափոխական կազ-
մակերպեալ մարմին կը շրջին փողոցնե-
րուն մէջ ի ցոյց:

Երրորդ—ի Հայաստան վերադարձող-
ներն գաղտնապէս հրագէն կը տանին
հետ:

Չորրորդ—հրազէն և ուրիշ ռազմա-
մթերք ուղարկուած են այս քաղաքէս.

Հինգերորդ— դրամական նպաստներ
ալ յղած են Հայաստանի մէջ ապստամ-
բութիւն յարուցանելու համար ընդդէմ
օսմ. պետութեան.

Վեցերորդ—կազմակերպեալ գաղտնի
յանձնախմբեր յղած են յառաջ տանելու
յեղափոխական դասը:

Յետ խորհրդածութեանց՝ ժողովն հե-
տեւեալ որոշումներն քուէարկեց. —

Կ'որոշենք.

Նախ— թէ վերոյիշեալ բոլոր ամբաս-
տանութիւնք ընդդէմ Վուսթըրի Հայոց՝
սուտ են.

Երկրորդ— որ այս որոշում հաղորդ.
ուի Ուոշինկթընի օսմ. ներկայացուցչին
և Բ. Դրան ի Կ. Պոլիս:

Երրորդ— որ Յանձնախումբ մի կազ-
մուի եօթն անձանցմէ ի պատրաստելայդ
պաշտօնական գրութիւններ և յառաջիկայ
կիրակի օր ներկայացունել զայն ժողովոյս
ի վաւերացումն:

Ա.

Վուսթըր, 23 Յունիւար. —

Երէկ նորէն ժողով եղաւ ատենապե-
տութեամբ Տիար Գրիգորեանի, և յանձ-
նախումբը ներկայացուց իւր տեղեկագիր:
Վիճաբանութիւնը քանիցս շատ կրակոտ ե-
ղաւ, այնպէս որ ատենապետն ստիպուե-
ցաւ ի կարգ հրաւիրել ատենախօսները:

Ատենապետը պաշտօնական նամակներ ևս ներկայացուց որք կը հաստատէին թէ արդարեւ Պարոն Թովանէլեան սուտ ամբաստանութիւն ըրած է քաղաքիս Հայոց դ'մ, իբր թէ սոքա յեղափոխական լինէին և օսմանհան պետութեան կործանման աշխատէին: Որոշուեցաւ որ այս հաստատագրեր ևս մացուին Ուօշինկիթըն յղուելու տեղեկագրին մէջ, և եօթն անձանձմէ մի մասնախումբ անուանուեցաւ գրութիւնը պատրաստելու համար, որք են Տեաքք՝ Գրիգորեան, Սերոն, Ռեսաիկեան, Շէրպէթճեան, Շուշան, Պօղիկեան և Կիրակոսեան:

Վուսթըր, 24 Յունվար.—

Անցեալ կիրակի, Յունվար 22ին, քաղաքիս Հայերն երկու տարբեր տեղեր մի և նոյն ատեն ժողով ունեցան, Թովանէլեանի դէմ բողոքողներն՝ ի Կրինձ Հօլ, որ էր մեծ ժողովը, իսկ նորա համակրողներէ մեծ մասամբ բաղկացեալ ժողով մ'ալ բաղդատարար աննշան թուով, տեղի ունեցաւ եկեղեցւոյ ժողովատրահին մէջ, Արթ. Հայր Սարաճեանի նախագահութեամբ: Պ. Թովանէլեան ջանաց հոն ինքզինք պաշտպանել, ըսելով թէ ինքն Վուսթըրի Հայոց ոմանց մասին միայն տեղեկութիւն տուած է Ուօշինկիթընի օսմանեան ներկայացուցչին թէ յեղափոխական և բաղդախնդիր մարդիկ են, ոչ թէ բոլորին դէմ: Ատենախօսն իւր երկար ճառը լինցուց չլինցուց՝ ահա Պարոն Յովհաննէսեան ոտքի ցատքեց և Թովանէլեանի երեսին գոռաց թէ զրպարտութիւն է ըրածը, թէ ինքն 1000, կամ 5000 թալէռի գրաւ կը դնէ որ Թովանէլեան չկրնար մէկ հատիկ յեղափոխական հայ նշանակել Վուսթըրի մէջ:

Ասոր վերայ պապանձեցաւ Թովանէլեան:

Եւ քիչ մ'ևս վիճաբանութենէ յետոյ ժողովն աւարտեցաւ: Ա.

ՆԱՄԱԿ ԽՍՐԲԵՐԴԷ

Խարբերդ, 2 Յունվար 1893

Խարբերդու Կարմրի գիւղը 150 տուն Տաճիկ և 100 տուն Հայէ կը բաղկանայ, անցեալներ գեղին եկեղեցին ծակեցին Տատայիճ գիւղացի հինգ տաճիկներ: Արծաթէ խաչեր և այլ զարդեր տարին: Ժողո-

վուրդը քաղաքիս արծաթագործներուն ծանուցին եղելութիւնը: Քանի մ'օր վերջը գողերուն երկուքը խաչերը կտարանելով կը բերեն քաղաքս Կարապետ արծաթագործին: Սա իսկոյն կը տեսնէ կը հասկնայ թէ գողողներն ուստի էին, ոստիկանի ետէ մարդ կը դրկէ: Գողերուն մին, Եուսուֆ, նշմարելով դարձուածը խոյս կուտայ, իսկ միւսը Ալի չաուշ, կը բռնուի: Հարցաքննութենէ յետոյ սա բանտ կը դրուի:

Գողութեան դէպքեր շատ յաճախ են վերջերս: Թորոսեան Տէր Յովհաննէսի տունը և Տէր-Յուսիկեան Աստուրի տունը գողեր մտան միևնոյն շաբթու մէջ, ի Կարմրի: Նոյն բանն է ուրիշ շատ գիւղերու մէջ, ինչպէս Շընթիլ, Խուլլու, Խոխ, Էթմիսեկ, Հոդէ, Վարդադիլ ևն. ուր շարունակ գողութեան, ծեծի, բռնաբարութեան և սպանութեան դէպքեր տեղի կ'ունենան: Պ. Ա.

Ներկայս մամուլ տակ դնելու պահուն ստացանք հետեւեալ ահաւոր լուրն Կ. Պոլսէ: Երանի թէ սխալ լինի:

ՆԵՄՄԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 11 Յունվար 1893

Մէկ երկու օրէ ի վեր շշուռն մը կը չըջի մայրաքաղաքիս մէջ թէ Հայոց Հայրապետը Խրիմեան Հայրիկ վախճանած է: Լրագրաց մէջ այս մասին բան մը չհրատարակուիր, սակայն կըսուի թէ Տպագրական Տեսչութիւնը թոյլ տուած չէ ծանուցանել Կաթողիկոսին մահը: Կը Պաամեն թէ այս Շաբաթ երեկոյ “Արեւելք” Լրագրի հրատարակութենէն ետքը, այդ Լրագրի խմբագրատունը կը բերուի հեռագիր մը որ կը ծանուցանէր Հայրիկի մահը: Խմբագրատան մէջ պատրաստութիւններ կ'ըլլան Լրագրոյն մէկ յրաւելուածով այս ցաւալի լուրը ծանուցանելու համար: Այս միջոցին հեռագրական պաշտօնեայ մի խմբագրատուն կը ներկայանայ և կը հարցունէ թէ Կաթողիկոսին մահը ծանուցանող հեռագիր ստացա՞ծ էին: Երբ հաստատական պատասխան կը տրուի, պաշտօնեան կ'ըսէ թէ այդ լուր սուտ է, ուստի պէտք չէ զայն ծանուցանել: Արեւելքի պաշտօնեայք ի սկզբան կը կարծեն թէ հեռագիրը ներկայացուող անձը խալ

մը խաղցած էր իրենց, սակայն աւելի հաւանական է որ հեռագիրը հերքող պաշտօնեանք ըլլայ խաղ խաղցողը: Չենք ուզեր որ այս տխրառիթ լուրը ստոյգ ըլլայ, սակայն դժբաղդաբար առ այժմ այնպէս կերելի թէ հաւանականապէս ստոյգ է: Կ'ըսուի թէ այս նիւթին վրայ խօսիչն ևս արգիլուած և վտանգաւոր է:

ԱՆԱՆՈՒՆ

Ազգային ԵՒ Քաղաքական

ԼՈՒՐԵՐ

“Մշակի” խմբագրտպետ Գ. Արծրունի, որպէս կը տեղեկանամք “Մշակէն”, կուրծքի իջուածք ունեցած է որով իւր ցնցղատապ կամ պոռնիչ դայրացած է:

Դեռ չհասան Տփղիսի այն թերթեր ուր Արծրունեայ մահացու հիւանդութեան մասին ընդարձակ տեղեկութիւններ տուած պիտի լինին:

* *

Մշակի մէջ “Կարնեցի” ոմն երկար յողումած մի հրատարակած է յորում կը պատմուի Գարեգին եպ. Սրուանձտեանցի լուսամբիս և յառաջդիմական գործունէութիւնն ի Կարին, 1863 թուականին: Սրուանձտեանց տուած է Կարինի կրթական և ազգային շարժման առաջին ցունցը:

* *

*

Կ. Պոլսէն կը գրեն “Ինտիփէնտէն-թի” թէ Սուլթանի յատուկ հրամանաւ ետ տարուած են Բոպէրթեան վարժարանէն երկու երիտասարդ թուրք իշխաններ: Փատիշահը անվայել համարեր է սրմանաւանդ իւր կայսերական ընտանիքին պատկանող այդ մահմետական իշխաններ քրիստոնեայ վարժարան յաճախեն:

* *

*

«Արձագանք» է կը քաղենք հետեւեալ լուրերը. — Տփղիսի մէջ ալ չարագործք ուժանակ գործածեւ սկսեր են:

Օրիորդ Իւխաննէի Սոփիա Արղու-

թեան — երկայնաբազուկ 4000 հատորէ բաղկացեալ իւր գրատուն նուիրած է Բարեգործական ընկերութեան:

Աղաբարա Լալաեան, Բագուցի հայ, կնքած է իւր մահկանացուն 34 տարեկան հասակում: Հանգուցեալն կտակեր է 5000 ռուբլի Շամախու եկեղեցւոյն և 2000 ռուբլի որու տոկոսիքով երկուեւ դպրոցում ձրիավարժներ պիտի պահուին:

1891 թուականին Կովկասի Հայոցմէ 1089 հոգի զինուոր առնուած են:

* *

*

Անգլիական դեսպանն ի Կ. Պոլիս, Սըր Բլէյր Ֆորտ, հանրային կրթութեան նախարարին ուշադրութիւնն հրաւիրեր է այն եղանակաւորութեանց վերայ զորս թրքական գրաքննութիւնը կրել կուտայ Աստուածաշունչին բնագրին և բողոքական դասնաւորին, նաև այն սեղմումներու վերայ որոց կ'ենթարկէ Ս. գրոց և ուրիշ քրիստոնէական գրեւեց վաճառումն և վերջապէս այն պարագային վերայ թէ ինչ ինչ կրօնական երգեր ջնջուած են ևն ևն: Նախարարն խոստացած է դեսպանին ամենայն ուշադրութիւն տալ այս պահանջմանը:

* *

*

Խարբերդէն կը գրեն «Ինտիփէնտէն-թի»:

Դրացի քաղաքի մի երիտասարդաց Գրիստոնէական Ընկերութեան նախագահըն գրած էր եկեղեցւոյ յանձնախմբի մի և խնդրած որ «յորդորեն երիտասարդներն շարունակել իրենց ժողովներ:» պատասխան տրուած էր թէ «նկատելով ծամանակին փափկութիւնը, խոհեմութիւն չեն համարիր խօսիլ այն մասին:» Այս նա մակ և պատասխան կառավարութեան ձեռքն անցած է, և յանձնախմբին հինգ անդամներն, որոց մին 75 տարեկան ծերունի, բանտն են այժմ երկու ամսէ ի վեր այդ պատճառաւ: Իբրև անկարգ մարդիկ պատժապարտ դատուած են նոքա, և դեռ կը սպասեն վճարեկ ատենի եղած դիմեցման մի ելքին:

* *

*

«Հայքի» մուտքն ի Ռուսիա ազատ է:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ուօքիլընը «Բէճիսթըր»ին մէջ կը գտնենք հետեւեալն. —

Հայք Բրիտանոսի մկրտութեան տօնն կը կատարեն Յունվար 18ին, և զտօնն «Ծնունդ» կ'անուանեն: Երէկ լուսաւորչական և բողոքական Հայերն մեծ ժողով մ'ունեցան այդ տօնի առթիւ և կրօնական պաշտօն կատարեցին. Պաշտօնեան էր Պատ. Կ. Մ. Մանաւեան: Մեծապէս շնորհակալ էին նոքա Ուոշպըրն և Մօէն ընկերութեան վերակացուներէն որք թոյլ տուած էին Հայ գործաւորաց բազմութեան պահել զայս Հայ-ազգային-եկեղեցական տօն: Նաև Պատ. Մանաւեանի՝ իրենց երախտագէտ գնահատման առհաւատչեայն եղող ընծայ մի նուիրեցին իբր 22 սողարի արժողութեամբ: Պաշտամունքըն արտասովոր շահեկանութիւն մ'ունեցաւ այնու գի էր Հին և նոր միանգամայն, երգեցին Հին Հայկական շարականներ և բողոքական երգեր: Լուսաւորչական և բողոքական Հայեր անդ մի սիրտ և մի հոգի էին, և զքարոզիչն ալ իրենց Հասարակաց կը համարէին:

* *

*

Տիար Յ. Պ կը գրէ մեզ Փրովիտէնսէ Յունվար 25ին. —

Անցեալ շաբթու «լոքսմոթիվ» գործարանին մէջ՝ Հայ երիտասարդի մը ու իտալացւոյ մը միջեւ վէճ տեղի ունեցաւ: Գործարանէն դուրս ալ վէճը կրկնուելով՝ իտալացին դաշունի հարուած մը տուաւ Հայուն: Ոճրագործը խոյս տուաւ և գետակը նետուելով ի լիւզ անցաւ յայնկոյս: Լսեցինք թէ մինչև իւր Հայրենիքը պիտի խախչի երթայ, Հայոց վրէժխնդրութենէն ազատ մնալու համար:

* *

*

Տեղական թերթի մի մէջ կը կարդանք հետեւեալն: —

Բոլոնէլ Ուէպէր հրաման հանեց որ այսուհետև Հայ կամ Ասորի չկրնայ ցամաք ելնել բայց եթէ այն պայմանաւ որ ինքզինք տարի մի ապրեցունելու համար բաւական գումար ունենայ: Կարնոյ ըՍթալեանի, Հայ երկաթագործ, թոյլ չտըրուեցաւ ցամաք ելնելու: Երէկ հասած է

նա, և ըսած է թէ յառաջագոյն երեք տարի մնացած է այս երկիրը: Իւր պատմութիւնը պէտք է ստուգուի:

* *

*

Ուօքիլընէ (Իլլինոյիս) կը գրէ մեզ: Այս փոքր քաղաք մ'է Շիքակոյէն 35 մղոն դէպ ի Հիւսիս, իբր 10 հազար բնակչօք: Երկու մեծ գործանոցներ կան հոս, մէկը թելի և միւսը շաքարի: Հայերուն գրեթէ ամենն ալ թելի գործանոցին մէջ կը գործեն, որ Վուսթըրի մեծ գործանոցին մէկ ճիւղն է: Հայ գործաւորաց թիւն 200ի մօտ է, առ հասարակ Խարբերդի գիւղերէն: Կան նաև 8 Թրքեր և 2 Ղզզլպաշ Մշեցի:

Մը. Հասքէլ անուն ամերիկացի երիտասարդ մը, որ թելի գործանոցին վարպետներուն մէկն է, կիրակի օրեր անգլիերէն դաս կուտայ Հայոց խմբակի մի՝ եպիսկոպոսական եկեղեցւոյն մէջ:

* *

*

Պոսթընէ կը գրէ մեզ Տիար Ի. Պաղտասարեան.

Պոսթընի Հայ Գաղթականութեան կողմանէ երկար ատենէ ի վեր կը զգացուէր Հայկական ճաշարանի մը պէտքը: Այդ պէտքի գոհացում տուաւ Տի. Պարսամ Պայենց՝ բանալով Հայկական ճաշարանը որ ի 71 Harrison Ave. և ուր մեր Հայրենակիցներ արեւելեան ճաշակաւ և չափաւոր գնով համեղ կերակուրներ կը վայելեն:

Ճաշարանը կը ծառայէ կողմնակի նաև Հայ Հայրենակիցներ մէկտեղ բերելու, իրարու ծանօթացունելու և օգտակար խօսակցութիւններ ունենալու:

* *

*

Պոսթընէն կը գրէ մեզ Տիար Փ. Թէ «Հայք»ի յաջողութիւնն դեղեցիկ օրինակ մ'է ոչ այնքան the survival of the fittestի որքան the survival of the bestի:

* *

*

Ձմեռն այս տարի ամերիկայի մէջ ալ ձմեռ կոչուելու արժանի է: Անցեալ վեց ձմեռներն անուամբ միայն ձմեռ էին, իսկ ներկայս գործքով, ազդեցութեամբ, գունով և յարատեւութեամբ ճշմարիտ ձմեռ մ'է: Առատ ձիւն կը տեղայ, յաճախ և սաստիկ ցուրտ կ'ընէ: Հայերն չեն կրնար չիշխել իրենց հայրենի երկրին իտէական չոր ու ցուրտ ձմեռն ու սպիտակազգեաց դաշտերն:

* *

*

Պըրլինկիթնի Համալսարանին մէջ այս տարի երեք Հայ ուսանողներ կան:—Միհրան Կիւտէնեան բժշկական ճիւղի աշակերտ, Կեսարիայի Թալաս գիւղէն: Նազարէթ Գալուստեան, երկրագործական ճիւղի աշակերտ: Ատանացի: Պետրոս Թ. Թաշճեան, բժշկական ճիւղի աշակերտ: Տիգրանակերտցի:

* *

Մալաթիայի երիտասարդ մի անցելներ Նիւ Եորքի մէկ հիւրանոցին մէջ իւր առաջին գիշերն անցունելու կառաջնորդուի: Անկողին մտնելու ատեն դռնն կը փակէ, կազն կը մարէ ու կը պառկի կը քնանայ: Երբ հետեւեալ օրն կ'արթննայ, շուրջ կը նայի և շատ կ'ապշի տեսնելով իւր պառկած սենեկի մէջ ուրիշ մարդիկ ևս պառկած: Կը մտածէ թէ այս երկրին մէջ թերևս այդպէս ընել ներելի է, նոր հիւրերու անկողին պատրաստել առաջին հիւրին սենեկին մէջ:

Շատ չանցած կը հասկնայ զարմացած երիտացարդն թէ ինքն ոչ ևս կը գտնուի ուր պառկած էր գիշերն: Ձգիտնալով թէ կազի ճրագն ոչ թէ փշելով այլ կազին ծորակն փակելով պէտք է մարել, ինքզինք թունաւորած է փախչող կազով, և այդ վիճակի մէջ չէ կրցած իմանալ թէ ի հիւանդանոց փոխադրած են զինքը:

Աւելի քան երկու շաբաթ դարմանուելէ յետոյ, երիտասարդն առողջացած արձակուեցաւ հիւանդանոցէն:

* *

*

Հասարակ ժողովրդէն ոմանք գանգատ կրնէին թէ «Հայք» ի լեզուն չափազանց բարձր է. այս տարի շատ պարզուած պիտի գտնեն զայն:

«Հայք» ի ներկայ թիւն ևս կը յղենք մեր այն բաժանորդաց որք ամերիկայէն դուրս այլ և այլ երկիրներ են և որոց բաժնեգին կը կարծենք թէ հեռաւորութեան պատճառաւ չեն կրցած ժամանել:

Իսկ Միացեալ Նահանգաց սահմանին մէջ անոնց միայն կը յղենք որք հաճած են իրենց հրաման մեզ հասցունել 1893ի համար:

«ՀԱՅՔԻ» ԾՆՈՐ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Առ Մեծ Տիար.

Կ. Ասատուրեան և Սիմոնեան 5 տողար
Պատ. Բէմալեան 5 „

Ընդունեցանք «Լեռնեց» ի «Աւազակը» 64 երեսներէ բաղկացեալ բանաստեղծութիւն տպեալ յԱթէս, 1892.

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տետրութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք գինուորական կրթութեան: Բազում ձեւերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէս կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք» ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

Մեծայարդ Տի. Մ. Չերազ իւր թերթի անդլիերէն հրատարակութիւնն գազրեցուցած է չորրորդ տարւոյնսկիզբէն, և միայն ֆրանսերէն պիտի հրատարակէ «ԼԱՌԱՅԻՆ», ամիսն մէկ անգամ: Թերթին տարեկան բաժնեգինն է 3 տողար 75 սէնթ կամ 18 ֆր. 75 սանթիմ: Հասցէն է:

33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

PATENTS

HOPKINS & ATKINS
Washington, D. C. 20
years' experience
write for information

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ հիվանդանոցի նիւ Ենոբ
26րդ և 27րդ փողոցներուն միջև
Դեղագիրք կը շինուին խնամով

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՈՐԾ

311 7րդ հիվանդանոցի նիւ Ենոբ
27րդ և 28րդ փողոցներուն միջև
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆԷ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողու-
թիւններն կրնան ապահովապէս գնել վե-
րոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը
ճարէ Յուն վար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր
ամիսաց կէսէն հաշուելով:

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Պ Ե Ղ Ա Ս Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

56 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER, MASS.

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ
և ամեն շարաթ երեկոյ հայազգի վաճա-
ռող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ
որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերու
կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլ-
խարկ, վերարկու, սոնազգեոտ (փանթո-
լոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին
ամենուն համար մէկ է եւ չափաւոր է.
Եկէք եւ տեսէք:

RONOFF & OLDSSEN

FINE CUSTOM TAILORS
And Dealers in

GENT'S FURNISHINGS

ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.

WORCESTER

MASS.

Յակոր Էքիզեան Կարապետ Էքիզեան
348 Fountain Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston, Mass

ԵՂԱՐԿ ԵՒ ԻՐԻՉԵՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան
57 CaManTo Hann, Harpoot
Constantinople, Turkey. Turkey in Asia.



REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Biliousness, Headache, Consti-
pation, Dyspepsia, Chronic Liver Troubles,
Dizziness, Bad Complexion, Dysentery,
Offensive Breath, and all disorders of the
Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to
the most delicate constitution. Pleasant to take,
safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail
on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules: for sour stomach.

Ripans Tabules: for liver troubles.

Ripans Tabules: a family remedy.

«ՀԱՅՔ»

Թղթակալմ

Ա. տարի 1տողար 50 սէնթ կամ 7Փր. 50ս.
Բ. տարի 2տողար կամ 10 Փրանք

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Ր Ր Ի Է Լ Ե Ա Ն